



# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Մեհրի Հարությունյան

Արմավիրի մարզ Գետաշենի միջնակարգ դպրոց

Մենքոր ուսուցիչ՝ Մարգուշա Գևորգյան

Բովանդակություն	1
Ներածություն	2
Հիմնական գլուխներ	
Գլուխ 1. Ուսուցիչների առարկայական և մասնագիտական հմտությունների կատարելազործում	4
Գլուխ 2. Հետազոտական աշխատանքների անցկացման մեթոդները , նպատակները	9
Գլուխ 3. Հարցում և արդյունքների դիտատարկում հետազոտական աշխատանք կատարող /կատարած ուսուցիչների շրջանում	13
Եզրակացություն	14
Օգտագործված գրականության ցանկ	16
Հավելվածներ	17

## Ներածություն

Հայաստանի հանրակրթության ոլորտի վերջին տարիների բարեփոխումներում առանցքային տեղ են գրավում ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության ոլորտի բարեփոխումները: Հայաստանի կրթական համակարգում ընթացող բարեփոխումների արդյունավետությամբ է մեծապես պայմանավորված մեր երկրի ապագա զարգացումը:

Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտուների սովորելու ցանկությունը իրանող բովանդակություն: Եթե կրթական համակարգը չունենա բարձրակարգ մանկավարժական կազմ և որակյալ ուսումնական բովանդակություն, ապա հասարակությունը իր կրթական պահանջմունքները բավարարելու է դպրոցից դուրս, իսկ վերջինս դառնալու է ձևական և անարդյունավետ հաստատություն:

Առաջնահերթ առաջադրանք նկատվում է ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացում և ժամանակակից կյանքի կարիքները բավարարող մանկավարժական կազմի ձևավորում: Այսօր մեծացել է բարձր որակավորում ունեցող, ստեղծագործ աշխատող, սոցիալապես ակտիվ և մրցունակ ուսուցչի պահանջարկը, որն ի վիճակի է կրթել սոցիալականացված մարդ արագ փոփոխվող աշխարհում:

Վերջին շրջանում հաճախակի են հնչում արտահայտություններ՝ կյանքի որակ, կրթության որակ, սոցիալական հաջողություն, կրթության որակի բարելավում: Իհարկե, դրան հնարավոր չէ հասնել առանց նորարարական տեխնոլոգիաների, ժամանակակից ուսումնական միջոցների ներդրման, ուսուցչի մասնագիտության հեղինակության բարձրացման, առաջավոր մանկավարժական փորձի բացահայտման և տարածման: Այս ամենին հնարավոր չէ հասնել առանց յուրաքանչյուր ուսուցչի պրոֆեսիոնալիզմի բարձրացման:

Ուսուցչի մասնագիտական կարևոր որակները՝ քրտնաշան աշխատանք, աշխատանքային կարողություն, կարգապահություն, պատասխանատվություն, նպատակ դնելու և դրան հասնելու ուղիներ ընտրելու ունակություն, կազմակերպություն, համառություն, իրենց մասնագիտական մակարդակի համակարգված և համակարգված բարելավում: Իրենց աշխատանքի որակը մշտապես բարելավելու ցանկություն և այլն: Լավ ուսուցչի անձնական որակներն են մարդասիրություն, ինքնատիրապետում, կարգապահություն, վարքի ճկունություն, գաղափարական համոզմունք, քաղաքացիություն, նախաձեռնություն, պարկեշտություն, անկեղծություն, ինքնակատարելագործման ձգտում:

Մասնագիտական և առարկայական զարգացման կատարելագործումը իրենից ենթադրում է ակտիվ մասնակցություն մեթոդական միավորումներին, ուսուցիչների խորհուրդներին, սեմինարներին, գիտաժողովներին, վարպետության դասերի աշխատանքներին, ժամանակակից տիրապետում կրթական տեխնոլոգիաներին, մեթոդական տեխնիկային, մանկավարժական գործիքներին և իհարկե հետազոտական աշխատանքներին: Ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարելավման հարցի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից աշխարհում մասնագետների բարոյական արժեգրկման և գիտելիքների ու հմտությունների հնացման արագացող գործնթացով: Ամերիկացի գիտնականների կարծիքով՝ տարեկան թարմացվում է տեսական գիտելիքների 5%-ը և մասնագիտական գիտելիքների 20%-ը, որոնք պետք է տիրապետի մասնագետը: Մասնագիտական կոմպետենտությունը ուսուցչի որակյալ աշխատանքի ցուցիչներից է: Նրա մասնագիտական մակարդակի բարելավումը յուրաքանչյուր ուսուցչի առաջնահերթ պարտականությունն է:

Այս համատեքստում կարևորվում է ուսուցիչների առարկայական և մասնագիտական հմտությունների կատարելազործումը, որը ենթադրում է որակյալ կրթություն:Այս թեման այնքանով է արդիական ,որ ուսուցիչները կատարում են հետազոտական աշխատանքներ, որոնք կարող են և՛ իրենց մասնագիտական առարկաներից լինել , և՝դասավանդման մեթոդիկայից:

Մասնագիտական և առարկայական հմտությունների կատարելազործումը հնարավոր է իրականացնել վերապատրաստումների միջոցով, տարբեր դասընթացներին մասնակցելու միջոցով, ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում:

Ուսուցիչների վերապատրաստումները Հայաստանում դիտարկվում են որպես մասնագիտական գարգացման հիմնական բաղադրիչ: Ուսուցչի մասնագիտական վերապատրաստումը մասնագիտացման հատուկ կազմակերպված գործընթաց է և առարկայի մասնագիտական և մանկավարժական գիտելիքների համակարգի, մասնագիտական գործունեության տեխնոլոգիաների, ստեղծագործական գործունեության իրականացման փորձի և մանկավարժական մշակույթի նկատմամբ մոտիվացիոն և արժեքային վերաբերմունքի յուրացման արդյունք:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ուսուցիչների հետազոտական և ստեղծագործական աշխատանքներ կատարելու արդյունավետությունը և այդ աշխատանքների կատարման արդյունքում նրանց մասնագիտական և առարկայական հմտությունների կատարելազործումը:

## Գլուխ 1. Ուսուցիչների առարկայական և մասնագիտական հմտութունների

### Լատարելագործում

‘Ուսուցիչները, որպես գիտության տեղական յուսատուներ, պետք է կանգնեն իրենց մասնագիտության ժամանակակից գիտելիքների ողջ բարձրության վրա:’(Մենդելեև Դ.Ի.)

Կրթության ոլորտում անընդհատ կատարվող բարեփոխումները ենթադրում են ուսուցիչների որակի հետազա բարելավում, ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով: Հիմնական նպատակն է՝ բարձրացնել հանրակրթության որակը ուսուցիչների մասնագիտական գիտելիքների ու մանկավարժական հմտությունների շարունակական զարգացման միջոցով և մանկավարժի մասնագիտության վարկանիշը՝ աշխատանքի պայմանների բարելավման միջոցով: Հիմնական խնդիրները հետևյալն են:

1. Ստեղծել պայմաններ ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման համար և մշակել ուսուցիչների որակավորմանը ներկայացվող նոր իրավանորմատիվային պահանջներ՝ ապահովելով նրանց մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումներ 5 տարի պարբերականությամբ:

2. Սահմանել յուրաքանչյուր տարի վերապատրաստվող ուսուցիչների թվաքանակը՝ ըստ առարկաների և ըստ մարզերի, ինչը կօժանդակի ուսուցիչների վերապատրաստման գործընթացի պլանավորմանը,

3. Կազմակերպել ուսուցիչների մասնագիտական կատարելագործման և որակավորման բարձրացման դասընթացներ, որոնք կտարբերվեն բովանդակությամբ, կազմակերպման ձևերով ու տևողությամբ՝ ըստ ուսուցիչների կարիքների:

Ուսուցիչների վերապատրաստումներին մասնակցելը ենթադրում է հետևյալ նպատաները՝

1. ուսուցչի համար գիտելիքների նորացման, թարմացման, ուսուցման մշտական պրոցեսի մեջ գտնվելու, կատարելագործման կարևորումը,

2. ինքնահաստատվելու, ուժերը չափելու, որպես ուսուցիչ սեփական մակարդակը պատկերացնելու մտադրությունը,

3. ատեսատավորվելու ցանկությունը, որոշ դեպքերում՝ տարակարգին դիմելու ցանկությունը,

4. այլ ուսուցիչների հետ փորձի փոխանակումը

Վերապատրաստման նպատակը՝ ըստ ուսուցիչների Ուսուցիչների գերակշիռ մեծամասնության պատկերացումները վերապատրաստումների նպատակների մասին հիմնականում համընկնում են վերապատրաստումների բուն նպատակներին: Ըստ ուսուցիչների՝ վերապատրաստումների գլխավոր նպատակն է՝

1. ծանոթացնել ուսուցիչներին կրթական ներկա փոփոխություններին,

2. մշտական զարգացնել և ուսուցանել ուսուցիչներին՝ ծանոթացնելով տարբեր ոլորտներում նորույթներին, փոփոխություններին,

3. «Ժամանակաշրջանի ոգուն» համահունչ դարձնել ուսուցիչներին, քանի որ ներկա սերունդների պահանջները, տրամաբանությունը, ըստ ուսուցիչների, այլ են և պահանջում են նոր մոտեցումներ, մեթոդներ և այլն:

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին նախագիծը:**

Նախագծով ներկայացվող կարգավորումներով առաջարկվում է ուսուցչի մասնագիտական չափանիշը դիտարկել զարգացման ոլորտների, մասնագիտական գործունեության ձևերի, կարողունակության մակարդակների և մանկավարժի բնութագրերի տեսանկյունից:

Ուսուցչի մասնագիտական չափանիշների համար սահմանվել է **զարգացման չորս ոլորտ՝** առարկայի իմացություն, դասավանդման մեթոդամանկավարժական (պրակտիկ) կարողություններ, սովորողին ցուցաբերվող աջակցություն, ինքնազարգացում և մանկավարժական համայնքի հզորացում:

**Որպես մասնագիտական գործունեության ձևեր,** ըստ զարգացման ոլորտների, դիտարկվում են առարկայական գիտելիքների զարգացումը, դարձնեացների և դասերի պլանավորումը, դասի վարումը, ուսուլսների կառավարումը, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ինտեգրումը, 21-րդ դարի հմտությունների (քննադատական մտածողություն, ստեղծարարություն, համագործակցություն, հաղորդակցում, տեղեկատվական գրագիտություն, մեղիագրագիտություն, տեխնոլոգիական գրագիտություն, ճկունություն, առաջնորդում, նախաձեռնողականություն, արդյունավետություն, սոցիալական հմտություններ) խթանումը, սովորողների կարիքների ճանաչումը, ուսումնառության գնահատումը, ներառական մեթոդների կիրառումը, մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնումը, կրթական քաղաքականությունների և պրակտիկայի իմացությունը, մասնագիտական բարեվարքությունը և ժողովրդավարական արժեքները:

Յուրաքանչյուր մասնագիտական գործունեության ձևի համար սահմանվել են հստակ և չափելի կարողունակություններ:

Յուրաքանչյուր զարգացման ոլորտի շրջանակում յուրաքանչյուր մասնագիտական գործունեության ձևի մասով ուսուցիչը կարող է դրսևորել **կարողունակության հետևյալ չորս մակարդակներից** որևէ մեկը.

1. տարրական մակարդակ, որի պարագայում ուսուցիչը գիտի և հիմնականում կարողանում է կիրառել հանապատասխան կարողունակությունները,
2. ձեռնահասության մակարդակ, որի պարագայում ուսուցիչը կարողանում է ստեղծագործարար կիրառել նշված կարողունակությունները՝ գործելով ըստ իրավիճակի նպատակահարմարության,
3. տիրապետման մակարդակ, որի պարագայում ուսուցիչը կարողանում է նաև աջակցել այլ ուսուցիչներին՝ իրենց կարողունակությունների բարեկավման ուղղությամբ՝ հանդես գալով իբրև վերապատրաստող, մենթոր և այլն,
4. փորձագետի մակարդակ, որի պարագայում ուսուցիչը հանդես է զայխ մանկավարժական գործունեության նոր մոտեցումների մշակման և ներդրման առաջարկություններով, իրականացնում է հետազոտական ակտիվ աշխատանք՝ ինչպես սեփական, այնպես էլ մանկավարժական գործունեության բարեկավման ուղղությամբ:

Կախված զարգացման ոլորտի շրջանակներում մասնագիտական ձևերի կարողունակության

մակարդակներից՝ նախագծով ներկայացվող կարգավորումներով առաջարկվում է տարբերակել մանկավարժի հետևյալ բնութագրերը՝ դասավանդող, ավագ ուսուցիչ, վերապատրաստող և հետազոտող ուսուցիչ: Ուսուցչի համապատասխանությունը մանկավարժի չորս բնութագրերից որևէ մեկին որոշվում է մասնագիտական զարգացման կարիքների գնահատման արդյունքում դասավանդման ձևերի դրսւորված կարողունակության մակարդակի միջոցով:

**Դասավանդող ուսուցիչ** է համարվում դասավանդած առարկայի մասնագիտական կրթության որակավորումը հավաստող փաստաթուղթ՝ դիպում ունեցող, «Առարկայի իմացություն» և մասնագիտական զարգացման «Դասավանդման մեթոդամանկավարժական (արակտիկ) կարողություններ» ոլորտի պահանջների առնվազն յոթանասուն տոկոսը բավարարող ուսուցիչը:

**Ավագ ուսուցիչ** է համարվում դասավանդած առարկայի մասնագիտական կրթության որակավորումը հավաստող փաստաթուղթ՝ դիպում ունեցող, «Առարկայի իմացություն» և մասնագիտական զարգացման «Դասավանդման մեթոդամանկավարժական (արակտիկ) կարողություններ» ոլորտի պահանջների առնվազն ութասուն տոկոսը բավարարող ուսուցիչը:

**Վերապատրաստող ուսուցիչ** է համարվում մասնագիտական զարգացման «Առարկայի իմացություն», «Դասավանդման մեթոդամանկավարժական (արակտիկ) կարողություններ», «Սովորողին ցուցաբերվող աջակցություն» և «Ինքնազարգացում և մանկավարժական համայնքի հզորացում» ոլորտի պահանջների առնվազն յոթանասուն տոկոսը բավարարող ուսուցիչը:

**Հետազոտող ուսուցիչ** է համարվում մասնագիտական զարգացման «Առարկայի իմացություն», «Դասավանդման մեթոդամանկավարժական (արակտիկ) կարողություններ», «Սովորողին ցուցաբերվող աջակցություն» և «Ինքնազարգացում և մանկավարժական համայնքի հզորացում» ոլորտների պահանջների առնվազն ութասուն տոկոսը բավարարող ուսուցիչը:

Վերապատրաստումների նպատակն է բարձրացնել ուսուցիչների ընդհանուր և հոգեբանամանկավարժական պատրաստվածության մակարդակը, հարստացնել ուսուցիչների ակադեմիական և մանկավարժական կոմպետենտությունը, ապահովել շարունակական մասնագիտական զարգացում, ինչպես նաև ծանոթացնել ուսուցիչներին դասավանդման ժամանակակից մեթոդների հիմնական դրույթներին և նորագույն կրթական տեխնոլոգիաներին, զարգացնել ուսուցչի մասնագիտական հնտությունները, ինքնուսուցման և ինքնադրսեորման կարողությունները:

Ուսուցիչը կրթության բարեփոխումների առանցքային դեմքն է:

Մասնագիտական իրավասությունը բարեկավելու ուղղությամբ աշխատանքը պետք է վերածվի մարդու անհատականության շարունակական զարգացման գործընթացի, դատողություններ անելու և տարբեր գործողություններ կատարելու նրա կարողության: Այն պետք է ուսուցչին ապահովի իր մասին ըմբռնումով, նպաստի աշխատանքի գործընթացում սոցիալական դերի կատարմանը: Ուստի կրթական ն հաստատությունում կրթության որակի կառավարման հիմնական միջոցը համարում ենք մասնագիտական կարողությունների կատարելագործման աշխատանքները: Կրթության որակը սոցիալական կատեգորիա է, որը որոշում է ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի արդյունավետությունը, որը համապատասխանությունը հասարակության կարիքներին և ակնկալիքներին երեխաների զարգացման գործում և ուսուցիչների մասնագիտական կարողությունները:

Այսօրվա պահանջները ստիպում են մեզ թարմ հայացք նետել ուսուցչի գործունեությանը՝ որպես կրթական գործընթացի առանցքային դեմքի: Ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունն այժմ դիտվում է մի կողմից՝ որպես մասնագիտական ուսուցման որակի չափանիշ, իսկ մյուս կողմից՝ որպես անհատականության հատկանիշ, որը բնութագրվում է աշխատանքային գործառույթների բարձր որակով կատարմամբ, աշխատանքի մշակույթով, միջանձնային հաղորդակցությամբ, մասնագիտական խնդիրները ակտիվորեն և ստեղծագործաբար լուծելու ունակությամբ:

Ուսուցչի մասնագիտական հմտությունները ,որոնք կարող են կատարելագործվել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ կատարելու ընթացքում, կարող ենք դասակարգել հետևյալ կերպ՝

1.Տեխնոլոգիաների, մեթոդների, միջոցների, գործունեության ձևերի և դրանց կիրառման պայմանների իմացություն.

2.Համակարգչային տեխնոլոգիաների տիրապետում;

3.գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու ունակություն;

4.Դաստիարակչական և կրթական գործընթաց նախագծելու ունակություն;

5.Իրենց գործունեության արդյունավետությունն ու արդյունքները վերլուծելու ունակություն:

Իսկ մեթոդական հմտությունները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝

- Ուսուցիչների տեսական և հոգեբանական պատրաստվածության բարձր մակարդակ
- Կրթական գործունեության մեջ նորարարական կողմնորոշման ձևավորում հիմնվածդասավանդման առաջավոր փորձի ուսումնասիրության, ընդհանրացման և տարածման վրա.
- Նոր կրթական ծրագրերի, կրթական պետական չափորոշիչների ուսումնասիրություն;
- Նոր կարգավորող փաստաթղթերի, ուսուցողական և մեթոդական նյութերի ուսումնասիրություն, ինքնակրթության հարցում ուսուցիչներին աջակցություն,

Հետևաբար, մասնագիտական կարողությունների կատարելագործումը լիովին համընկնում է մեթոդական աշխատանքի առաջադրանքների հետ:

Մասնագիտական և առարկայական հմտությունների զարգացման մեջ կարևոր է նաև ուսուցիչների ինքնակրթությունը:

Ինքնակրթությունը մեթոդական աշխատանքի ինտեգրալ համակարգի կարևոր օղակն է, մանկավարժների կողմից երեխաների հետ աշխատելու մեթոդների և տեխնիկայի ինքնուրույն ընկալման բարդ և ստեղծագործ գործընթաց:

Հոգեբանական և մանկավարժական գրականության ուսումնասիրությունն ու վերլուծությունը ցույց է տալիս, որ ինքնազարգացումը և ինքնակրթությունը կարևոր տեղ են զբաղեցնում ուսուցչի մասնագիտական աճում (Վ.Ի. Անդրեև, Յու.Կ. Բարանսկի, Տ.Ի. Իլյինա, Վ.Գ. Մարալով, Լ.Ս. Միտինա, Է.Պ. Միլաշիչ, եւ ուրիշներ)

Ժամանակակից ուսուցչի առջև ծառացած խնդիրների շրջանակն այնքան լայն է, որ նրանից պահանջվում է բարձր մասնագիտական, ստեղծագործական, հետազոտական ներուժ՝ առկա հոգեբանական, մանկավարժական և մեթոդական գրականության մեջ խնդիրների լուծումը գտնելու համար: Հետևաբար, արդիական է դառնում ուսուցչին հոգեբանական և մանկավարժական աջակցություն ցուցաբերելը, նրա ինքնազարգացումը կառավարելը, մեթոդական աշխատանքի համակարգ տրամադրելը, որն ուղղված է այս զարգացմանը խթանող խնտեգրալ կրթական տարածքի ստեղծմանը: Ինքնազարգացման ակտիվ դիրք ունեցող ուսուցիչների համար մեծ խթան է վստահության վրա աշխատանքը, գործընկերների հետ փորձի փոխանակման հնարավորությունը, կրթական աշխատանքի այս կամ այն ուղղությամբ խորը աշխատանքի առաջարկը:

Քանի որ մասնագիտական կրթության ժամանակակից ուսումնական հաստատությունը բարդ, բարձր կազմակերպված հաստատություն է, անհրաժեշտ է մշտական մոնիթորինգ և ստացված արդյունքների վերլուծություն ուսուցիչների մասնագիտական և մանկավարժական կարողությունների բարեկավման համար: Հենց ուսուցիչն է տարբեր նորամուծությունները գործնականում իրականացնելու գիտակոր դեմքը, և նոր պայմաններում իրեն առաջադրված խնդիրները հաջողությամբ իրականացնելու համար նա պետք է ունենա մասնագիտական կարողությունների անհրաժեշտ մակարդակ:

Ոսուցչի արհեստավարժության զարգացումն անհնար է դիտարկել առանց ուսուցչի ինքնակատարելագործման: Այս պարագայում առաջ է գալիս անձի մոտիվացիան, որը դիտվում է որպես գործոնների համակարգ, որոնք բնորոշում են մարդու վարքի ուղղությունը: Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացման համար անհրաժեշտ է ձևավորել ինքնակատարելագործման մոտիվացիա հանուն նոր գիտելիքների և մասնագիտական հմտությունների ձեռքբերման:

Մասնագիտական կոմպետենտությունը կոմպետենցիաների համալիր է, այն անձի ներքին հոգեբանական բաղադրիչների միասնական համակարգ է, որոնցում անպայմանորեն ներառվում են գիտելիքներն ու հմտությունները: Գիտնականներ Ա. Ա. Դերկաչը և Ի. Ա. Զիմնյայան համարվում են կոմպետենցիաների դասակարգումների հեղինակներ: Նրանք «կոմպետենտություն» և «կոմպետենցիաներ» զարաֆարները կիրառում են ուսուցման վերջնական որակն արտացոլելու համար, որոշներն ել վերոնշյալ եզրերը կիրառում են տարբեր հատկանիշներով օժտված անձանց բնութագրելու համար: Մանկավարժական կոմպետենտություն ասելով՝ հասկանում ենք մասնագիտական գործունեության ընթացքում ուսուցչի տեսական և պրակտիկ գիտելիքների համակցումը: Ըստ Լ. Յու. Կիվցովի՝ «Մասնագիտական կոմպետենտությունը մասնագետի խնտեգրված հատկանիշ է ունեցած գիտելիքների, հնարավորությունների, կարողությունների մակարդակի հիման վրա, ինչն ուղենիշ է հանդիսանում դեպի մասնագիտական արհեստավարժություն»:

**Գլուխ 2.Հետազոտական աշխատանքների անցկացման մեջողները և նպատակները:**

Պարզ սահմանումներում «հետազոտությունը» ներկայացվում է որպես համակարգված գործողությունների ամբողջություն, շարք, հաջորդականություն, որի նպատակն է փաստերի բացահայտումն ու մեկնաբանությունը, վարկածների հաստատումը/հերքումը, տեսական և գործնական հայացքների վերանայումը:

Հստ Սթինհառուզի (1978), հետազոտությունը համակարգված հարցադրումների ամբողջություն է, որը (որից ստացված տեղեկատվությունը) հրապարակայնացվում է:

**Հետազոտությունը կարող է դասակարգվել ամենատարբեր հիմքերով՝**

- . ըստ այդ հետազոտության շրջանակներում կիրառված մեթոդների,
- . ըստ այն գիտելիքի, որը հետազոտությունը նպատակ ունի ստեղծելու/վերհանելու,
- . ըստ այն թիրախային խմբի, որին հետազոտությունն ուղղված է, .

. ըստ հետազոտության հիմնախնդրի և այլն:

Հաշվի առնելով հետազոտության նպատակները և հետազոտության առջև դրված խնդիրները և ուսումնասիրվող հարցերը՝ առավել նպատակահարմար է իրականացնել հետազոտական մեթոդների տրանզուլյացիա (հետազոտվող օբյեկտի մասին տեղեկատվություն հավաքել մի քանի մեթոդների կիրառումով՝ ներառելով ինչպես որակական մեթոդներ, այնպես էլ քանակական: (Հավելված նկար 2)

### ***Որևէ ականական մեթոդներ***

. Ազահովում է հասկացման խորությունը

. Ուսումնասիրում է դրդապատճառները

. Սուրյեկտիվ է

. Կարող է բացահայտել

. Հետազոտական է

. Մեկնաբանում է

### ***Քանակական մեթոդներ***

. Զափում է տարածվածության մակարդակը

. Ուսումնասիրում է գործողությունները

. Օբյեկտիվ է

.Ապահովում է ապացույցներ.

.Նկարագրողական է

.Նկարագրում է

Թե՛ քանակական, թե՛ որակական հետազոտություններ իրականացնելիս պետք է հիշել, որ տեղեկատվությունը, որը մենք ստանում ենք մեծապես պայմանավորված է այն հարցերով, որոնք մենք տալիս ենք, կամ ընդգրկում ենք հարցաթերթիկում: Որակական հետազոտության մեթոդներ կարելի է ընտրել խորացված հարցազրույցը և ֆոկուսխմբային քննարկումների մեթոդները: Քանակական հետազոտություն կարելի է իրականացնել ստանդարտացված հարցազրույցի մեթոդով:

Մանկավարժական հետազոտությունների անցկացման համար կան հատուկ գիտական մեթոդներ, որի իմացությունն անհրաժեշտ է անհատական և կոլեկտիվ գիտական հետազոտություններով զբաղվող յուրաքանչյուրին: Հետազոտության մեթոդների տեսությունը կոչված է բացահայտելու դրանց էռությունը, նպատակը, տեղը և դրանց համակցման համար գիտական հիմքեր տալը:: Մեթոդական դրույթներն ու սկզբունքները հենց այն մեթոդների մեջ են, որոնք ստանում են իրենց արդյունավետ, գործիքային արտահայտությունը: Հետազոտության մեթոդներն ու տեխնիկան մեծապես որոշվում են հետազոտողի նախնական հայեցակարգով, ուսումնասիրվողի էռության և կառուցվածքի վերաբերյալ նրա ընդհանուր պատկերացումներով:

Այս հետազոտության նպատակը Հայաստանի հանրակրթության բարեփոխումների երկու առանցքային բաղադրիչների՝ ուսուցիչների մասնագիտական զարգացման (վերապատրաստման) և հանրակրթության բովանդակության համակռողմանի ուսումնասիրությունն է՝ հանրակրթության վերջին արդյունքների և խնդիրների համատեքստում: Կրթական համակարգերի արդյունավետությունը մեծապես չափվում է ստվորուների ցուցաբերած արդյունքներով: Իսկ սովորողների արդյունքների վրա էական ազդեցություն է գործում ուսուցիչների և ուսուցանվող նյութի որակը: Միջազգային փորձը վկայում է, որ հանրակրթության ոլորտի բարեփոխումների արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե ինչպես է գործում ուսուցիչ-ուսուցանվող բովանդակություն-աշակերտ եռանկյունին:

Հետազոտության նպատակներն են՝

1) ուսումնասիրել, թե որքանով է արդյունավետ իրականացվող հետազոտությունը,

2) ուսումնասիրել, թե որքանով է հնարավոր կատարելագործել մանկավարժի մասնագիտական հմտությունները հետազոտական աշխատանքի ընթացքում,

3) պարզել, թե ինչպիսի ազդեցություն է այն ունենալու մանկավարժի առարկայական գիտելիքների և հմտությունների զարգացման վրա:

Ակնկալիքները՝

1.Հետազոտական աշխատանքի արդյունավետության բարձրացում ,

2.Ուսուցիչների առարկայական և մասնագիտական հմտությունների կատարելագործման ուղիների պարզաբանում

3. Բարձր մակարդակի, ստեղծագործ կադրերի պատրաստում և վերապատրաստում:

Զեռնարկվող միջոցառումները և քայլերը ենթադրում են անհրաժեշտ պայմանների ստեղծում, հետազոտական աշխատանքների հմտությունների զարգացում, հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում, հետազոտությունների գործընթացը խթանող ուսուցիչների ստեղծագործական միջավայրի ձևավորում:

Կարևոր քայլերից մեկն է նաև հարցազրույցների ճիշտ պլանավորումը և իրականցումը: ( Հավելված Նկահ 1)

Հարցազրույցները կարելի է անցակացնել ինչպես միևնույն առարկան, այնպես էլ տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների շրջանում: Հարցազրույցները՝ ըստ հետազոտողի նախաձեռնության հնարավոր է անցկացնել նաև օնլայն տարբերակով :Այդ դեպքում ուսուցիչների ավելի լայն շրջանակ կարող է մասնակցել հարցմանը: Արդյունքում հետազոտողը կարող է ավելի ամփոփ պատկեր ստանալ իր կատարած հարցումից:

Հետազոտական աշխատանք կատարողը պետք է հիմնախնդրին տա որոշակի և հասկանալի ձևակերպում, որը կօգնի նրան հետազոտել երևույթի հետ կապված իրավիճակը փոփոխելու, դժվարությունների հասկացման, տեսականորեն կամ գործնականորեն առկա անպատասխան հարցերին պատասխաններ գտնելու համար:

Յուրաքանչյուր հետազոտական աշխատանք բաղկացած է հետևյալ հիմնական մասնաբաժիններից:

- Հետազոտական հիմնախնդրի հիմնավորում/արդիականություն (գրականության վերլուծությամբ)
- Հետազոտության նպատակ
- Հետազոտության խնդիրներ
- Վարկած(ներ)
- Մեթոդաբանություն (մեթոդի տեսությունը), մեթոդներ
- Ընտրանք՝ մեթոդաբանությունը, հաշվարկը, դեպքերի ընտրությունը որակական հետազոտության պարագայում
- Տվյալների վերլուծության մեթոդաբանությունը (կարող է տեղադրվել մեթադաբանության բաժնում և կարող է ներկայացվել առանձին)



Հետազոտության արդյունքները ավելի ամփոփ լինելու համար հարցումներ անցկացրել եմ նաև արդեն ստեղծագործական և հետազոտական աշխատանք գրած մասնագետների շրջանում, քանի

որ հետազոտական աշխատանք կատարվել են նաև նախորդ տարիներին և նրանք ,ովքեր արդեն ունեն որոշակի փորձ կարող են հստակ պատասխան տալ հարցերին:Ուսուցիչները հետազոտական աշխատանք կատարելիս բավական ծավալուն աշխատանքներ են կատարում են ինչպես աշակերտների ,նրանց ծնողների ,հոգեբանների ,այնպես էլ իրենց գործընկերների հետ:

Գլուխ 3. Հարցում և արդյունքների դիտատարկում հետազոտական աշխատանք կատարող/կատարած ուսուցիչների շրջանում

Հետազոտությունը կատարել եմ որակական և քանակական հետևյալ մեթոդների գուգակցմամբ՝ վիճակագրության վերլուծություն, ուսուցիչների շրջանում հարցաթերթիկային հարցումներ:

Հարցաթերթի կազմման ժամանակ հետևել եմ մի քանի սկզբունքների:Դրանք են՝

• հարցաթերթում հարցերը պետք է հասկանալի և պարզ ձևակերպված լինեն: Հարցմանը մասնակցում են տարբեր տարիքային խմբերի, տարբեր առարկաներ դասավանդող մանկավարժներ :

• Հարցը պետք է ձևակերպված լինի հարցվողի մայրենի լեզվով՝ գրագետ, բայց ոչ բարդ լեզվով:

• Հարցը պետք է լինի միանշանակ՝ համեմատելի տեղեկատվություն ստանալու համար:

Ուսուցիչների հարցում եմ անցկացրել՝ օգտագործելով հետևյալ հարցաթերթիկը՝(Կավելված Նկար 3),

Հարցումն անցկացրել եմ տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների շրջանում ՝մաթեմատիկա,անգլերեն,հայոց լեզու և գրականություն ,աշխարհագություն:

Հարցումների արդյունքում բացահայտեցի, որ հարցված ուսուցիչների կարծիքները գրեթե համընկնում էին:Հետազոտական և ստեղծագործական աշխատանքները բարձրացնում և կատարելագործում են ուսուցիչների և՝ առարկայական ,և՝ մասնագոտական հմտությունները:

Կատարված աշխատանքների արդյունքում խորը կերպով ուսումնավիրություն է կատարվում միշտարկայական ,միջմշակութային բնագավառներում, ուսումնասիրվում են տեսությունները , դասավանդման և ուսումնառության մեթոդները, դասվանդման ընթացքում աշակերտների մոտ արժեհամակարգի ձևավորումները, ուսուցիչների փորձի փոխանակումը և այլն:

Այդ պատճառով մանկավարժական հետազոտությունը թույլ է տալիս մեզ կառուցել կրթության տեսություն, որը բացատրում է կրթական փաստերը: Այս հետազոտությունը գիտական մանկավարժական առաջընթացի ճանապարհն է՝ ընդդեմ կրթական առասպեկտների, որոնք չեն հաստատվում նվազագույն փորձարարական վերլուծությամբ: Մանկավարժական հետազոտությունը համարվում է արժեքավոր ուսուցման գործիք, որն ուժեղացնում է ուսումնական գործընթացը. Եթե ուսուցիչը օգտագործում է հետազոտություն պրակտիկայում, ապա այն բարեկավում է իր կրթական գործունեության բննադատական արտացոլումը ուսումնական գործընթացում: Հետազոտություն խթանում է բննադատական մտածողությունը, ստեղծագործական միտքը և դրա միջոցով ուսուցումն ակտիվանում է, այն նույնիսկ կարող է նպաստել պասիվ մասնագետների, նորարարությունների հանդեպ հետաքրքրասիրություն և նախաձեռնություն ձևավորել:

Ուսուցիչը, ով ուսումնասիրում է, ուսուցանում է իմացության սեփական փորձից, նա ունի գիտելիքների զարգացման ինքնատիպ և հաջորդական պրակտիկա և առաջնորդում է իր աշակերտների գիտական և նորարարական ոգու ձևավորումը: Նա բննադատ-ուժիկտիվ մտավորական է, որը վճռական է վերափոխելու սեփական իրականությունը:

## Եզրակացություն

Այսօր պրոֆեսիոնալ ուսուցիչը ուսուցիչ է, ով գիտակցում է սեփական մասնագիտական կարողությունները բարելավելու անհրաժեշտությունը: Իր մասնագիտական կարողությունները ձևավորելու համար ուսուցիչը պետք է շարունակի սովորել, ուրիշներին սովորեցնելու համար նա պետք է ընդունակ լինի ստեղծագործելու, ոչ ավանդական դասեր վարի: Ուսուցիչը պետք է ներգրավված լինի դպրոցի զարգացման կառավարման գործընթացում, ինչը նպաստում է նրա պրոֆեսիոնալիզմի զարգացմանը:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության բաղադրիչները, ինչպիսիք են մանկավարժական մշակույթը, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքը, մասնագիտական որակները, գիտելիքները, կարողությունները և հմտությունները անընդհատ թարմացման և վերանայման կարիք են զգում: Ուսուցչի մասնագիտական որակի ապահովումը և բարձրացումը այսօր իրագործվում է հասուկ հիմնարկներում՝ մանկավարժական բուհերում, Կրթության ազգային ինստիտուտում:

Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցչը ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրատվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ: Ուսումնասիրելով հիմնախնդիրը եկա այն եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է, որում մանկավարժական կոմպետենտությունը սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում: Հետագա անելիքների ուղենչում՝ հաշվի առնելով հարցված ուսուցիչների կարծիքները և իմ կատարած հետազոտության արդյունքները, կօգտագործեմ իմ ձեռք բերած կարողունակությունները նոր ուսումնական տարրում կատարելով այլ հետազոտական և նախագծային աշխատանքներ : Մասնագիտական կրթության որակի կառավարման համակարգի գործունեությունը ապահովելու գործում կարևոր դեր է խաղում ուսուցիչների մասնագիտական հմտությունների մակարդակը բարելավելու մանրակրկիտ ծրագրված աշխատանքը: Պետության կողմից իրականացվող վերապատրաստումներն ուղղված են խնդրի լուծմանը, սակայն երբեմն կարող են առաջանալ թերություններ, որոնք կարող են խաթարել գործընթացի լիարժեքությունն ու ամբողջականությունը:

Ծատ կարևոր է, որ ուսուցիչն ինքը գիտակցի սեփական մասնագիտական կարողությունները բարելավելու անհրաժեշտությունը: Սա ենթադրում է մանկավարժական աճի համար մոտիվացնելու և բարենպաստ պայմաններ ստեղծելու անհրաժեշտություն: Պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնցում ուսուցիչը ինքնուրույն գիտակցում է սեփական մասնագիտական որակների մակարդակը բարելավելու անհրաժեշտությունը: Մասնագիտական կարողությունների զարգացումը մասնագիտական փորձի յուրացման և արդիականացման դիմամիկի գործընթաց է, որը հանգեցնում է անհատական մասնագիտական որակների զարգացմանը, մասնագիտական փորձի կուտակմանը, որը ներառում է շարունակական զարգացում և ինքնակատարելագործում: Այսօրվա պահանջները ստիպում են մեզ թարմ հայացք նետել ուսուցչի գործունեությանը՝ որպես կրթական գործընթացի առանցքային դեմքի: Ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունն այժմ դիտվում է մի կողմից՝ որպես մասնագիտական ուսուցման որակի չափանիշ, իսկ մյուս կողմից՝ որպես անհատականության հատկանիշ, որը բնութագրվում է աշխատանքային գործառույթների բարձր որակով կատարմամբ, աշխատանքի մշակույթով: Ուսումնական տարրա համար մանկավարժական կարողությունների կատարելագործմանն ուղղված աշխատանքներ պլանավորելիս հաշվի են առնվում ուսուցիչների կարծիքները: Ուսուցիչները մեծ մասամբ զոհ են շարունակական կրթական համակարգից:

## Առաջարկություններ

- 1.Առաջարկում եմ կատարել փոփոխություններ ուսուցիչների մասնագիտական հմտությունների կատարելազորմանն ուղղված վերապատրաստումների ձևաչափում
- 2.Մինչ հետազոտական աշխատանք գրելը,զարգացնել ուսուցիչների շրջանում հետազոտական աշխատանք կատարելու հմտություն
- 3.Քայի անհատական հետազոտական աշխատանքներից,կատարել նաև խմբային հետազոտական աշխատանքներ
- 4.Կատարել այցեր դպրոցներ և բացահայտել ուսուցիչների ձեռք բերած մասնագիտական հմտությունների զարգացման արդյունավետությունը և դրանց կիրառումը
- 5.Կատարել փոխադարձ դասալսումներ վերապատրաստում անցած ուսուցիչների շրջանում

Օգտագործված գրականության ցանկ

<<Հարցադրման մեթոդը և ուսուցման արդյունաբերության բարձրացումը>>

Դուկասյան Այս (Հողվածներ)

<<Ետազոտական աշխատանք կատարելու հիմնական պահանջներ և դրանց ուսուցման  
մեթոդիկա>>

Աղամյան Ն.Վ.

<<Ոսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝  
Հայաստանում հնրակրթության բարեփոխումների համատեքստում>>

Մերոք Խաչատրյան, Սիլվա Պետրոսյան, Գայանե Թերզյան

<<Ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության զարգացումը որպես հիմնախնդիր>>


Սարգսյան Աննա

<<ՔՇԿ հետազոտական կարողությունների գործնական զարգացման ուղեցույց>>

Բալասանյան

Ս.Վարդանյան

<https://hy.warbletoncouncil.org>



Նկար 1



Նկար 2

Ներառված հարցեր	բավարար	միջին	լավ	գերազանց
1.Ստեղծագործական աշխատանք կատարելը դրական ազդեցություն է թողել իմ մասնագիտական կարողությունների վրա:		3%	20%	77%
2.Ես առարկայական նոր հմտություններ եմ ձեռք բերել հետազոտական աշխատանքների ընթացքում:			65%	35%
3.Ձեռք բերված մասնագիտական հմտությունները կիրառելի են ուսումնական գործընթացում :			28%	72%
4.Հետազոտական աշխատանքների թեմաները արդիական են:		5%	10%	85%
5.Հետազոտական աշխատանքի արդյունքները արդարացրել են սպասելիքները:		8%	32%	60%

### Նկար 3